

նի մեր հասարակութեան համար և մենք կարուզանանք պահել ու պահպանել դպրանոցը:

Գ. Ռ.

## ՅՈՐՔԵՎՆՆԵՐԻ ՑԱՐԻՆ

Վերջին տարիները հայ հասարակութիւնը տօնեց մի շարք նշանակալից յօրելեաններ:

Մի շարք բազմավաստակ հայ գրական-հասարակական գործիչներ և կուլտուրական հիմնարկութիւններ արժանացան հասարակութեան բարոյական և նիւթական խրախուսանքին, գնահատուեցան ըստ արժանույն:

Հայ հասարակութեան լայն խաւերը, որ բարոյական այնքան պարտք ունէին հատուցանելու հայ գրականութեան և հայկական կուլտուրայի անխոնջ, քրտնատանջ մշակներին, յարմար առիթներ ունեցան գոնէ մասամբ հատուցանելու այդ վեհագոյն պարաքը և սրտանց ողջունել մեծանուն գործիչներին:

Այս, ես գիտեմ, որ յօրելեանները չի կաւելի լիովին հաշուել մի հասարակութեան կուլտուրական առաջխաղացման անհերքելի ապացոյցներ. գիտեմ, որ յօրելեանական աղմկալից ծափահարութիւնները այնքան էլ լուսաւոր երեսյթի ցուցանակներ չեն ամբողջովին, սակայն, թոյլ առուել ինձ լինել մի բեշ իդէալիստ և այդ կուլտուրական տօները ի մի հաւաքիլով, դասել նրանց այն լուսաւոր երևոյթների շարքը, որ գոնէ մասամբ ապացոյց հն հասարակութեան լայն խաւերի վեր բարձրանալուն կուլտուրականութեան սանդուղքի աստիճաններով:

Ես կողմնակից չեմ կոյք, անհիմն լաւատեսութեան, աւելի շուտ, հայկական կեանքի վերաբերմամբ, ես ինձ կարող եմ հաշուել յոռետես:

Ես գիտեմ, որ հայերէն գիրքը չ'ունի ընթերցող, հայերէն թերթը չունի բաժանորդ, հայ գպրոցը անմտիթար գրութեան մէջ է, հայ բեմը չունի յաճախորդների լայն շրջան:

Ես գիտեմ, որ հայ գրողը աղքատ է և ստիպուած ճարել օրուայ հացը ուսուցչութեամբ կամ մի այլ պաշտօնով, ես գիտեմ, որ հայ ուսուցիչը կոպէկներ է ստանում և ապառում խոնաւ ու պաղխցիր. գիտեմ, որ տատասկու է հայ գերասանի ուղին և որ հայ ժուրնալիստի երազն է հօնօրաբը:

Բայց...

Անթափանց խաւարը երբիմն պատուող լուսոյ չնշին շողը անդամ վառ արեգակ է թւում խաւարի ճանկերում խարխափողին:

Անուանեցէք ինձ օպտիմիստ, երազլուտ, բանաստեղծ, բայց ևս չեմ կարող առանց հրճուանքի և բուռն ուրախութեան կարգալ հայ վաստակաւոր գրուղների յօրելեանների նկարագրութիւնը, գպրոցական-ուսուցչական և գրական ֆօնդների իրավունքման նուիրուած տողերը:

Ես յոդնեւ եմ հայ իրականութեան ցաւոս մթնոլորտի յիղձուցիչ օղը ծծելուց, թոյլ տուէք, որ անհուն բիրկրանքի ժայիտը խաղայ իմ գէմքին. թոյլ տուէք, որ ոսկի անուրջներ ծննն սըրտումն ձրագրական այդ, գուցէ և չափազանցրած, գուցէ և խարպուսիկ լուրիը:

Ծանր է, ախ անչափ ծանր, յուսախարուհի, բայց էլ աւելի ծանր, էլ աւելի խեղդիչ է անծայր յոռետէսութիւնը:

\* \* \*

Այս 1912 թուականը կարելի է խսկալէս անուանել յօրելեանական տարի:

Այս տարի լրանում են մի շարք յօրելեաններ, հայ գրականութեան և հայկական կուլտուրայի լուսաւոր տօներ:

Վէհագոյնը այդ տօներից, մեծագոյնը այդ յօրելեաններից անշուշտ հայկական տպագրութեան 400-ամեակն է:

Անդուգտկան տօն:

Հայ մտքի, հայ կուլտուրայի տօնը! Կարելի՞ է երեակայի աւելի մեծ, աւելի վէճ յօրելեար, քան թէ՝

Հայ գիրքը!

Եւ ա եռանդուն գործունէութիւնը, այն բուռն աշխատանքը, որ այսօր սկսուել է հայ հասարակութեան լայն խաւերում մթէ կարող է բիրկրանը չըծնել հայկական կուլտուրայի առաջխաղացմանը նախանձախնդիր իւրաքանչիւր մէկի սրտում:

Հայ գրքի յօրելեանը:

Այս, թոյլ տուէք, գէթ մի ժամ մռառանաւ հայ իրականութեան ցաւոս կողմերը, թոյլ տուէք մի բողէ գէճ շպրահել ու կատանքը իմ աչքերից, ապատ թսդնել գէթ մի վարկան ցաւոս քնարիս արտասուրքի լարերը և օրհներդ կարգալ միծ յօրելեարին....

\* \* \*

Մամուլի տուած լուրերը գրաւական են այն հաւատին, որ հայ զրբի մեծ տօնը կը կատարուի ըստ արժանուոյն փառահեղ կերպով:

Յօրելհանական հանդէսների նստիաձեռնութիւնը վերցրած երկու պատուական ընկերութիւնների՝ Բագուի Մարդասիրական ընկերութեան և Թիֆլիսի հրատարակչական ընկերութեան անունները գրաւական են յօրելնանի արժանաւոր իրագործմանը:

Հայ զրբի տօնը կարժանանայ փառաւոր տօնախմբութեան:

Սակայն, այդ նախյօթելեանական դենտային աշխատանքը չպէտք է մոռացնի մեզ, որ այդ մեծ տօնից զառ այլ տօներ էլ ունենք մենք տօնելու այս տարի:

Հայկական նոր գրականութեան փառաւոր գոհարի, մեր «գիրք-գրքոց»-ի, անմոռաց «Վէլք Հայաստանի» ի հօթանասնամեակը:

Մեր աւագագոյն լրագրի՝ «Մշակ»-ի բառամամեակը:

Հայ ըեմի ամենումեծ մշակներից մէկի, ծերունի հայ գրամատուրք Գ. Սունդուկեանի գրական գործունէութեան երեսնամեակը:

Հայ քնարի տիտաններ թ. Յովհաննիսեանի և Յ. Թումանեանի յօրելիանները:

Հայկական Նազանի, գժրախտ Դուրեհանի վաղաժամ մահուան քառասնամեակը:

Աբովեան, Սունդուկեան, Դուրեհան, Յովհաննիսեան, Թումանեան:

Թանգագին անուններ, հարազատ գէմքեր:

Տօններ ըստ արժանուոյն վէճ յօրելեանները:

Պատկինը զարդարենք հայկական կուր-

առայի մեծ մշակների ճակատը:

Սիրով և երախտագիտութեամբ ողջունենք կենդանի անմահներին:

Ծաղիկներով զարդարենք մեսածների շիրմը:

ՈՒՄ. ՀԱՄԱԼԵԱՆ

Խարկով

դարձել այժմս Տփխիսի երկու անհաշտ հայ օրաթերթերի՝ «Մշակ»-ի և «Հորիզոն»-ի համար:

Կարդում եմ Տփխիսում գումարուած, տպագրութեան յօրելեանի առթիւ, ժողովների արձանագրութիւնները, Լէօփ և Ստ. Մալխասնեանի յօդուածները, և երկու թերթերի խմբագրական նկատողութիւնները և առաւել ևս վշտանում, աւելի ևս ամօթից ճնշւում: Հայաղղի երկու տարածուած թերթեր օրը ցերեկով հասարակականապային լուրջ ծանրակշիք հարցերը գարձրել են անձնական հաշիւնների հարց, մեծ, կարևոր խընդիրները փոքրացրել, նսեմացրել են ու արգահատել գարձրել և իրենց և այդ հարցերին:

Իրջմիտ, գործին ծանօթ եղողը այդ բոլոր ժողովներից, անգամ զիտական պարզաբանութիւններից կարող է հղակացնել, որ մի կողմից այսպէս կոչուած «Հորիզոնականները» ցանկանում են խափանել «Մշակ»-ի յօրելեանը, կարծես ուղում են վրէժ լուծել իրենց անհանոյ Հ. Առաքելիհանից ու Ա. Քալանթարից և այդ պատճառով «Մշակ» թերթին-այդ հասարակական օրգանին են ցանկանում վնասել. միւս կողմից «Ճշակականները» աշխատում են անպատճառ թերթի յօրելեանը կատարել—որ կնշանակէ զրամժողովել և թերթն ապահովել և այդ նպատակով զանազան բացատրութիւններ, յայտագրելոր են ներկայացնում ապացուցելու որ տուածին տպագրութիւնը 1512 թ. չէ լոյս տեսել, այլ աւելի ուշ:

Միթէ իրօք այս տեսակ բանակոփեր, ուրին այս անունը տան անգամ մեղք է, պատիւ է բերում այդ թերթերին, Միթէ հասարակական-գրական գործիչներին վայել է զանազան տեսուկ շինծու պատճառաբանութիւնների մէջ ընկնել, որ խանգարուի այս կամ այն յօրելեանը: Զէ որ հէնց այդ թերթերը իրենք պէտք է նպաստեն հաւասարապէս երկու յօրելեանի էլ կանոնաւոր, յաջող կազմակերպմանը. չէ որ այդ թերթերը պէտք է հասարակական ծանրակշիք հարցերը անաշառ վերլուծութեան ենթարկեն և ոչ թէ միտումաւոր լուսաբանութիւնների առարկայ դարձնեն:

Միամիտ պիտի լինել կարծելու համար, որ այժմ Տփխիսում իրօք 1512 թ. սկզբունքային հարցով են զբաղում, որովհետեւ բանակուի մէջ մտածները, բանակուի ընթացքը բոլորովին այլ բան է ցոյց տալիւ: Ստկայն, եթէ իրօք երկու կողմն էլ անաշառ հասարակական գործիչներն են.

«ՄՇԱԿ»-ի 40-ԱՄԵԱԿԸ, թէ ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱ-ԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱԿԸ

Ահա այն հարցը, որ սքօղուած զանազան սկզբունքային և գիտական վիճաբանութիւնների անուան տակ, հրատապ բանակուուի նիւթ է